Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2026 թ. հուլիսի 13-ին կայացած թիվ 18 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. հուլիսի 13-ին կայացած թիվ 18 նիստը անցկացվեց հարցման կարգով:

Օրակարգում՝

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ասոցացված անդամների 2026 թվականի ընտրությունների մրցույթին թեկնածությունների առաջադրման վերաբերյալ հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ասոցացված անդամների 2026 թվականի ընտրությունների շրջանակում՝ «Կենսաբանական և հարակից գիտություններ» մասնագիտությամբ (Բնական գիտությունների բաժանմունք) հայտարարված թափուր տեղերի համար թեկնածությունների առաջադրման վերաբերյալ հարցը.

51 տարին չլրացած հավակնորդների թափուր տեղի համար՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, «Կենսաբանություն» ԳՀԻ կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար, կ.գ.դ., դոցենտ Կարեն Արամայիսի Ղազարյանի, ինչպես նաև ԵՊՀ «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, կ.գ.դ., պրոֆեսոր Կարեն Արմենի Թռչունյանի թեկնածությունները:

Առանց տարիքային սահմանափակման թափուր տեղի համար՝ ԵՊՀ «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտի Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոզ հիվանդությունների ուսումնասիրության լաբորատորիայի ղեկավար, կ.գ.դ., պրոֆեսոր Մարինե Սեմյոնի Առաքելյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ուսումնասիրելով հավակնորդների ինքնակենսագրական տվյալները, հրատարակված գիտական աշխատությունների ցանկը, «Scopus» գիտատեղեկատվական հարթակում արտացոլված Հիրշի գործակիցը (h-index), ինչպես նաև հաշվի առնելով նրանց համապատասխանությունը ասոցացված անդամի թափուր տեղի համար սահմանված առաջադրման պայմաններին՝ առաջադրել բոլոր 3 թեկնածուներին՝ մասնակցելու ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ասոցացված անդամների 2026 թվականի ընտրությունների հայտարարված մրցույթին:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ Ի.Կ. Շահազիզյան